Մոլախոտերի սերմերը, ձմեռը հողի մեջ մնալով, ոպտագործում են այն խոնավությունը, վորը պահպանվել եր ձմեռվանց: Նրանք կարողանում են ուռչել տաքանալու մոմենտին և հենց վոր բարենպատա չերմաստիճան ե լինում, նրանք միասին ծիլեր են տալիս կուլտուրական բույսերի ցանցառ, ուշացած ծիլերի մեջ: Այս հանգամանքն ե, վոր կուլտուրական բույսերին զնում ե անհավասար պայմանների մեջ մոլախոտերի դեմ կովելու ժամանակ:

Մոլախոտերն սկսում են ավելի արագ գարգանալ, սկսում են հետզետե ստվեր ձգել հացահատիկների վրա, խեղել նրանց: Դրա հետևանքով կուլտուրական բույսերը թույլ են դարձացնում արմատալին սիստեմը, վորը պետք ե ապահովել դայսի վետնից վերև գտնված մասը խոնավությամբ և սննդարար նյութերով:

Հետագայում, անբարենպաստ պայմաններում — հողի վերին շերտերում խոնավության բացակայության, չոր քամիների, ցորենի ժանգով վարակվելու դեպքերում — բույսի նորմալ զարգացումը խանգարվում է: Խոնավության և ոննդարար նյութերի հոսանքը դանդաղում է, վորի հետևանքով հատիկի բերքը իջնում է, իջնում և նաև նրա վորակը:

Ամեն որ գարնանը բնությունը ավելի և ավելի զարթնում է: Զերմաշափի ամեն մի աստիճանի բարձրացման հետ շատանում և հողում վնասատուների թիվը, շատանում և սընկային վնասատուների թիվը:

Դարնան առաջին որերին, քանի դեռ ցուրտ, և կուլտուրական բույսերը, ցորենը միայն մի թշնամի ունի — մոլախոտերը, այն ել միայն նրանք, վորոնք կարող են աճել ցածր աստիճանի տակ: Իսկ հետզհետեւ տաքանալով, այդ թշնամուն միանում են և ուրիշ վնասատուներ: Յեկ թեպետ ցորենին սկզբի ժամանակում հարկավոր ե տաքություն (նա ավելի լավ և զարգանում), բայց արդ տաքությունը նպաստում և նաև վնասատուների և մոլախոտերի արագ զարգացմանը:

Ցորենի և մյուս հացահատիկների ցանքսի ուշացումը բույսը այնպիսի պայմանների մեջ ե դնում, վոր նա չի կարող նորմալ կերպով զարգանալ, և իբրև հետևանք՝ նա աննորմալ կերպով զարգացնում է հատիկը, վորը շատ նվազ ե լինում: Հատիկի բերքը ուժեղ կերպով իջնում է: Միության հարավային մասում ցորենի ցանքով ուշացման յուրաքանչյուր որը բերում է բերքի իջեցում: Ահա մի քանի որինակներ.

Գարնանացան ցորենի բերքը Պերսիանվայում
1933 թվին

| Ցանքսի ժամկետերը | Բերքը ցենաներներու հեկտարից | |
|------------------|-----------------------------|---|
| | Հարդը | Հատիկը |
| 1 ժամկետը | 6 առլրիմ . . . | 52 |
| 2 » | 16 « . . . | 50 |
| 3 » | 26 « . . . | 59 |
| 4 » | 6 մայիսի . . . | — |
| 5 » | 16 « . . . | 48 |
| 6 » | 26 « . . . | 15 |
| 7 » | 6 հունիսի . . . | 13 |
| | | 16,5 16,0 11,3 11,8 8,4 3,5 0,5 |

1933 թվի գարնանացան ցորենի աճման ժամանակ յեղած յեղանակի պայմանները դեռ ևս բոլորի համար հիշելի են: Նրանք շատ նպաստավոր եյին ցորենի զարգացման համար: Անձրևները գալիս եյին ամբողջ վեգետացիոն ժամանակաշրջանի ընթացքում և շնորհիվ դրան, հողը բավականաչափ խոնավացած եր: Ցանկացած ժամկետին ցանքած ցորենը տալիս եր միասին ծիլեր:

Զերմային պայմանները նույնպես նպաստավոր եյին բարձր ջերմաստիճաններ, վորոնք ցորենի համար վնասակար են, չեն նշգել: Մինչև հունիսի 17-ը, ալսինքն՝ համարյա առաջին ժամկետին ցանքածի հասունացման վերջը, մինչեւ անգամ մաքսիմալ ջերմությունը 30° -ից ավելի չբարձրացավ: Հետագա որերին նա բարձրացավ մինչև 32°: Դրա հետ ել հարաբերական խոնավությունը 40% -ից ցած չեր. իջնում:

Կարելի յեր սպասել, վոր գարնանացան ցորենի ցանքսի ուշացումը խիստ կերպով չի արտահայտվի նրա բերքատվության իջման վրա: Դուրս յեկավ ուրիշ բան: Ուշացած ցանքը իջեցրած բերք տվեց, և վորքան ուշ եր կատարված ցանեար, այնինան ավելի ուժեղ կերպով իջնում եր ինչպես նարդի, նույնպես ել առանձնապես հատիկի բերքը:

Ցանքսի վերջին յերկու ժամկետերը (մայիսի 26 և հունիսի 6) առանձնապես ցածր բերք տվին: Մինչև անգամ հարդի բերքն ել ցածր եր:

Յեղանակի նույն պայմաններում, վորոնք կային ցորենի աճման ժամանակ, կարծես չեր կարելի հարդի ցածր բերք սպասել: Բայց այդպես գուրս չեկավ: Վնասատուները, վորոնց համար յեղանակի այս պայմանները նույնպես նպաստավոր եյին, ուշ ցանքսերի ցորենի հատիկի ծլման սկզբից սկսած, վնասել են նրան, և մասամբ բոլորովին վոչնչացրել են բույսերը, իսկ մասամբ ել նրանց այնպես են վնասել, վոր նրանք չկազողացան կազդուրվել:

Ցանքսերի մայիսյան ժամկետերը և մինչեւ անգամ ապրիլի յերկրորդ կեսի ցանքսերը ավին նույնպես ցածր բերք: Սակայն այստեղ յերկրորդ, յերրորդ և հինգերորդ ժամկետերի ցանքսերի հարդը համարյա միատեսակ ստացվեց: Վեգետատիվ մասսալի զարգացման պայմանները միատեսակ եյին: Իսկ հատիկի բերքը ավելի ուշ ցանքսերի մեջ դուրս յեկավ խիստ ցածր:

Բերքի անալիզը ցույց է տալիս, վոր հատիկի մորակը ուշացման դեպքում վատանում է: Վորքան ավելի ուշ եր կատարված վատանում է:

տարվել ցանքսը, այնքան ավելի նվազ եր հատիկը, և մայիսի 6-ի ցանքսն արգեն ավեց այնքան նվազ հատիկը վոր իբրև առլրանքային հատիկ, նա չեր բավարարում վոչ մի պահանջի:

Ավելի ուշ ցանքսերի հատիկն իրենից ներկայացնում եր կտմ մի զարգացած սերմարան, կամ սերմարան, վոր նոր և սկսում զարգանալ: Իսկ ցանքսի նորմալ ժամկետը ավեց միանդամայն լավ հատիկ և միանդամայն լավ բերք:

Պետք են նկատել, վոր մայիսի 6-ի և 16-ի ցանքսերի հատիկի համեմատաբար բավարար բերքը միայն խաբուսիկ բերք եւ Առաջինը ավեց 18,8 ցեն. իսկ յերկրորդը 8,4 ցեն. հեկասարից: Կարծես հատիկի բերքը բավարար եւ բայց մայիսի 6-ի ցանքսի ցորենի հատիկի 1 ցենաները իր 706 գրամ բնակշռով չի կարելի համեմատել առաջին ժամկետի ցանքսի հատիկի 1 ցենաների հետ, վորի բնակշռոր 760 գրամ եր:

Այդ պատճառով չի կարելի մինչև անգամ ասել, թե քանի՞ անգամ մայիսի 6-ի կամ 16-ի ցանքսի բերքը վատ են նորմալ ժամկետի ցանքսից: Ուղղակի ասել, վոր նա յերեք կամ չորս անգամ պակաս եւ, այդ ճիշտ չի լինի:

Ի՞նչն եր 1933 թվի ուշ ժամկետերի ցանքսի գարնանացան ցորենի խիստ ցածր բերքի պատճառը:

Ամենից առաջ բերքի այդ ցածրացումը կախված է նրանից, վոր ցանքսը ուշացնելով, կրծատվում է ածման ժամանակաշրջանը: Առանձնապես կրծատվում է ծերուց մինչև հասկ արձակելու մեջ յեղած ժամանակաշրջանը, յերբ զլսավորապես ստեղծվում է բույսերի աճող մասսան: Որինակ, ցանքսի առաջին ժամկետին ծերուց մինչև հասկ արձակելը անցել եր մի այն 46 որ:

Ցանքսի ուշացումը, վոր կապված է աճողական մասսայի պակասեցման հետ, պակասեցնում է նաև հատիկի բերքը:

Սակայն 1933 թվին հատիկի բերքի անկումն ավելի ուշ ժամկետերում ավելի ուժեղ եր տեղի ունենում, քան հարգի անկումը: Այս ասում է և այն մասին, վոր ուշ ժամկետերի արմատային սիստեմը համեմատաբար ավելի վատ եր զարգացել, քան գետնի վերեի մասսան: Մի քանի հեղինակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր ցածրացած շերմաստիճանի տակ, այսինքն՝ ցանքսի կանուխ ժամկետերին, արմատային սիստեմի զարգացումն ավելի լավ է տեղի ունենում բույսի գետնի վրա յեղած մասի զարգացումից, քան թե բարձր շերմաստիճանի տակ, վորը նկատելի յեր ցանքսի ուշ ժամկետերին:

Բարենպաստ ջերմաստիճանը, ողի բարենպաստ խոնավությունը ցորենի աճման ժամանակ բարենպաստ են յեղել վոչ միայն ցորենի համար, այլ և սնկերի զարգացման համար ևս, մասնավորապես ժամկի զարգացման համար:

Ժամկը բույսերի վրա սկսեց յերեալ այն ժամանակ, յերը առաջին ժամկետի ցորենի հատիկն արդեն սկսել եր զարգանալ: Յերկրորդ ժամկետի ցորենը դեռ նոր ծաղկում եր: Յերրորդ ժամկետի ցորենը հասկ եր արձակում, իսկ մյուսներն այդ ժամանակ դեռ ևս գտնվում ենին խողովակի առաջացման կամ թփավորման շրջանում:

Արագ զարգացող ժամկը, թեպետ և ուշ եր սկսել վարակել ուշ ցանքսերի բույսերին, բայց հատիկի առաջացման մոմենտին նրանց վրա արդեն թե տերեւները և թե ցողունը շատ խոշոր չափով վարակել եր: Սննդարար նյութերի կուտակումը և նրանց աեղափոխումը դրա հետևանքով ել խանդարվել եր: Հատիկը զարգացել եր անսորմալ կերպով, վորպիսի հանգամանքն արտահայտվեց նաև նրա բերքի իջման վրա:

Մինչև 32^o բարձրացած շերմաստիճանը և այդ ժամանակ ողի ցածրացած ողի խոնավությունը չի կարելի հատիկի նվազության իրրե պատճառ քննել:

Այս բանը հաստատում են նույնպես այն ցորենի ցանքսը, վորը մշակվում եր մեր քննած փորձի կողքին, բայց պահպանվել եր ժամկի վարակումից:

Զանազան ժամկետերին ցանված զանանացան ցուենիք բերքը 1 քառ. մետրից գրամներով

| Ցանքի ժամկետերը | Ցույիք կը-շիրք գրամ-ներով | Հատիկի կը-շիրք գրամ-ներով | Հարաբերությունը տա-կաներով | 1000 հատիկի կշիռ գրամ-ներով |
|------------------|---------------------------|---------------------------|----------------------------|-----------------------------|
| 1 ժամկետը 6 ամպ. | 704 | 304 | 43 | 42 |
| 2 » 16 » | 708 | 316 | 45 | 42 |
| 3 » 26 » | 674 | 262 | 39 | 40 |
| 4 » 6 մայիս | 576 | 250 | 43 | 38 |
| 5 » 16 » | 620 | 204 | 39 | 35 |
| 6 » 26 » | 490 | 200 | 39 | 33 |
| 7 » 6 հուն. | 380 | 156 | 41 | 30 |

Ամենից առաջ այս փորձից յերեալ է, վոր ցանքսի ուշացման դեպքում հարդի բերքը, ինչպես և հատիկի բերքը, սկսած

զանքսի յերբորդ ժամկետից, նույնպես իջնում է: Բայց հարդի բերքի վորոշ իջեցմանը համապատասխանում ն հատիկի բերքի վորոշ իջեցում: Դա հաստատվում է նաև Յ-րդ սյունակի թվերով:

Հատիկի հարաբերությունը ամբողջ բույսի բերքին, կամ ուրիշ խոսքով — հատիկի բերքը ցանքսի բոլոր ժամկետերի համար քիչ է փոփոխվում: Առաջին ժամկետում նա հավասար է 43%: իսկ վերջինում՝ 41%: ին

Սյատեղ հարդի և հատիկի բերքի իջեցումը պետք է բացատրել միայն նրանով, վոր ցանքսի ուշ ժամկետերը կրճատում էն աճողական ժամանակաշրջանը: Դրա հետևանքով բույսը զարգացնում է քիչ աճող մասսա: Իսկ դա արտահայտվում է հատիկի բերքի իջման վրա:

Մեջ բերենք մի աղյուսակ, վորը ցույց է տալիս աճողական ժամանակաշրջանի այդ կրճատումը:

Առերի թիվը ցանքսից մինչեւ հասկ արձակելը

Ցանքսի 1 ժամկետի բույսինը 73 որ

| | | | | | |
|---|---|---|---|----|---|
| » | 2 | » | » | 66 | » |
| » | 3 | » | » | 60 | » |
| » | 4 | » | » | 54 | » |
| » | 5 | » | » | 52 | » |
| » | 6 | » | » | 49 | » |
| » | 7 | » | » | 46 | » |

Վերջին ժամկետի հարդի բերքը համարյա 2 անգամ քիչ է, քան առաջին ժամկետի բերքը: Բայց առաջին ժամկետի ցանքսը աճման համար ցանվելուց մինչև հասկ արձակելը 73 որ ունի, իսկ վերջինը միայն 46 որ:

Հետո վերջին ժամկետի հատիկի բերքը նույնպես յերկու անգամ քիչ է առաջին ժամկետի հատիկի բերքից: Հետևապես, հատիկի հարաբերությունը հարդին նորմալ կերպով է ընթանում: Քիչ քանակությամբ կանաչ մասսան չի կարող մեծ քանակությամբ հատիկ արտադրել:

Այս ցանքսի հատիկի ընտակիուր չեր կարելի վորոշել, բայց 1000 հատիկների բացարձակ կշիռը նույնպես ասում է, վոր բերքի մեջ նվազ հատիկ չկար: Վերջին ցանքսի 1000 հատիկների կշիռը շատ ավելի պակաս է, քան առաջին ցանքսի 1000 հատիկների կշիռը, սակայն նա շատ լավ է լցված:

Այս փորձը թույլ է տալիս ուշադրության արժանի մի յերակացություն անել: Մինչեւ մեզ յեղանակի բարենայա

պայմաններում ցորենի անման ժամանակ, սինչենի անգամ նողում բավականաչափ սենյարար նյութեր յեվ խնավորյան յեղած դեպքում, մինչեւ անգամ բույսերի չվեասինուր յեվ նրանց ժամկով չվարակված դեպքում յեկա, ցանքսի ժամկետի ու շացումը յերկրամասի պայմաններում զարևանացան ցորենի ինչպես նարդի, նույնպես յեվ հատիկի բերքն ընկնում է, յեվ վորեան ու է կատարված ցանքսը, այնուն իիս կերպված ընկնում և բերքը: Դա բացարձարվում է ցորենի աճողական ժամանակաշրջանի կրճատումով: Մինչև անգամ առանց չոր քամիների, առանց ժանդի, առանց սղոցող միջատի և ուրիշ վասառուների, մինչև անգամ հողի մեջ խոնավություն յեղած դեպքում ևս ցորենի ցանքսի ուշացման յուրաքանչյուր ուր ժամկետից հետո բերում է մեկ տոկոսով պակաս բերք:

Իսկ բնիչ կերպի ուշացման մի որը, յերբ չոր քամի յի լինում, յերբ յերկան գան ժանդը, հողի չորությունը:

Վերեսում մեջ բերված 1933 թվի տվյալները պատահական չեն Ահա Դոնի փորձնական դաշտի յեռամյա տվյալները:

Գարենացան ցորենի բերքը ցենսներներով մեկ հեկտարից

| Ժամկետերը | Հարդը | Հատիկը | Բնակչուր |
|----------------------------|-------|--------|----------|
| Ցանքսի 1 ժամկետը | 26,5 | 11,6 | 763 գր |
| » 2 » 7 որ հատու | 24,1 | 10,3 | 717 » |
| » 3 » 14 » » | 24,2 | 7,8 | 696 » |
| » 4 » 21 » » | 21,9 | 4,8 | 670 » |
| » 5 » 28 » » | 19,6 | 3,6 | 634 » |

Ուշ ժամկետերի հարդի բերքը խիստ կերպով չի լինի: Այդ պետք է բացարձել նրանով, վոր ուշ ցանքսին ավելի շատ կեղատությած եյին մոլախոտերով: Բայց ուշ ժամկետերի ցանքսի հատիկի բերքը շատ խիստ կերպով ընկափ: Նա նորմալ բերքից յերեք անգամ պակաս ստացվեց:

Ամեն որը բերք իջեցել է 3 տոկոսով:

Ինչպես յերեսում է յերբորդ պատճյակից, հատիկի նվազությունն անխախտ կերպով ուժեղանում է ցանքսի ուշացման հետ միասին:

Այսպիսի տվյալներ ստացվել են նաև Ռուստով: Նախիջնանի փորձնական կայտրանում 1917—1919 թվականներին:

Ցորենի բերքը ցենտներներով հեկտարից

| | |
|------------------------------|----------|
| Յանքսի 1-ին ժամկետ | 9,6 ցեն. |
| » 2-րդ » | 6,4 » |
| » 3-րդ » | 5,1 » |

Մյուս յերկրամասերի թվական տվյալները նույն ցուցանիշներն են տալիս Ահա, որինակ, Բեղենչուկի կայարանի թվերը.

Գարնանացան ցորենի բերքը ցենտներներով հեկտարից

| | |
|-------------------------------|----------|
| Յանքսի 1-ին ժամկետ | 9,6 ցեն. |
| » 2-րդ » 10 որ հետո | 7,5 » |
| » 3-րդ » » » » | 4,8 » |
| » 4-րդ » » » » | 1,2 » |

Մինչև անգամ կուբանի ավելի բարեհաջող պայմաններում եղարնտնացան ցորենի ցանքսի ժամկետը խոշոր նշանակություն ունի:

Գարնանացան ցորենի բերքը ցենտներներով 1 հեկտարից

| Ժամկետները | Հարգը | Հատկելը | Բնակչութ |
|------------------|-------|---------|----------|
| Յանքսի 1 ժամկետ | 51,0 | 16,8 | 686 քր |
| » 2 » 10 որ հետո | 53,0 | 16,4 | 680 » |
| » 3 » 20 » » | 52,0 | 14,0 | 665 » |
| » 4 » 30 » » | 43,5 | 12,0 | 626 » |
| » 5 » 40 » » | 40,5 | 10,3 | 581 » |

Յեթև ուշ ժամկետի ցանքսի հարգի բերքն իջնում է միայն 20 տոկոսով, հատիկի բերքն իջնում է 40 տոկոսով, պատճառը նույն է, ինչ վոր առաջ եր. բերգի մեջ ստացվում է նվազ հատիկը Նրա բնակչութ ուշ ժամկետում ընկավ 100 պրամով կանուխ ցանքսի հետ համեմատած:

ԴԵՐԱՎԵԼ ՑԱՆՔԸ

Վերեւմ մենք համեմատեցինք միայն գարնանացան ցորենի ցանքսի այն ժամկետերը, վարոնք ավելի ուշ եյին ընթանում նորմալ ժամկետից, իսկ ցանքսի նորմալ ժամկետն ընդունված եր այն, վորը զաշտ է զուրս զալու առաջին որերին:

Վոչ պակաս հետաքրքրական է համեմատել ցանքսի նորմալ ժամկետի հետ և այն ցանքսերը, վորոնք նախորդում են

նորմալ ցանքսին: Այդ ցանքսերը, ինչպես հայտնի յե, սաացել են զերավաղ ցանքսերի անուն: Գերավաղ ցանքսերը կոլտնակեռթյունների և խորհոնականությունների պրակտիկայի մեջ սկսեցին մուտք գործել միայն վերջին յերկու տարիները: Սակայն 1932 թ. գերավաղ ցանքսերի խոշոր փորձերը արտադրական պայմաններում տվին հացահատիկների բերքի վորոշակի բարձրացում համեմատած կանուխ ցանքսի հետ:

Սրաագրական ցանքսերը 1933 թվին 240 հազար հեկտար տարածությամբ, չայած մի շարք սխալների, վոր թույլ եր տրված գործի նորության պատճառով, նույնական ցուցյ տվին շատ զեսքերում բերքի բարձրացում համեմատած կանուխ ցանքսի հետ:

Ահա մի շարք թվեր, վորոնք հաստատում են այդ: Իր աշխատության մեջ Ա. Յ. Պոպովը գերավաղ ցանքսից թվեր և մեջ բերում:

Ահա նրանցից մի քանիսը.

Գարնանացան ցորենի բերքը ցենտներներով 1 հեկտարից

| Ժամկետների և կուտանսեռությունների անունները | Դերավաղ ցանքս | Սովորական ցանքս |
|---|---------------|-----------------|
| Վերին Դանի ռայան | | |
| Դուբրովսկի կոլտնակառություն | 8,0 | 4,5 |
| «Էլենինի պատգամները» կոլտնակառություն | 6,0 | 4,0 |
| Միլերովի ռայան | | |
| Պոգայովի Մալչևկի կոլտնակառություն | 10 | 5,0 |
| Մոլոտովի Կոշարի անվ. կոլտնակառություն | 13 | 8 |
| Շախտինսկի ռայան | | |
| Ստալինի անվ. կոլտնակառություն | 12 | 9,5 |
| Նավօչերկասոկի ռայան | | |
| Ստալինի անվ. № 1 կոլտնա. Ռոդ. Նիսկեթ. | 13 | 8 |

Միջինը յերկրամասում գարնանացան ցորենի բերք և սկել.

Գերավաղ ցանքսը 8,8 ցենտներ 1 հեկտարից
Սովորական » 6,5 » » »

Միջին հաշվով գերավաղ ցանքսի բերքն ավելի բարձր կուրս յեկավ ցանքսի նորմալ ժամկետերի ցանքսի բերքից: Խովոչերկասոկի չատիկային ինստիտուտի 1933 թ. կատարած ցանքսերը միանգամայն համապատասխանում են այս յեղակացության հետ:

Մելյանոպուս 069 գարնանացան ցուենի բերքը.

Գերավաղ ցանքս մարտի 26.ին հավասարվում եր 43 ցենտ. հարդ և 20,5 ցենտ. հատիկ.

Կանուխ ցանքս ապրիլի 6-ին հավասարվում եր 33 ցենտ. հարդ և 17,0 ցենտ. հատիկ.

Այս թվերից յերեվում ե, վոր գերավաղ ցանքսը հարդի բերքը կանուխ ցանքսից 25 տոկոսով զերազանցել ե, իսկ հատիկի բերքը՝ ավելի քան 15 տոկոսով:

Ուկրայինական Սելեկցիոն ինստիտուտի, ինչպես և մյուս հետախուզագործների ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր այն ցանքսերը, վորոնք կանուխ են կատարված, ցածր ջերմաստիճանի տակ, ավելի կայուն են ինում հետազայտմ շեղանակների անպարենպատ պայմանների դեմ, քան ցանքսերը, վորոնք կատարվել են ավելի ուշ և բարձր ջերմաստիճանի տակ:

1933 թ. բերքի մեջ շնորհիվ բավականաշափ խոնավության քանակի և չոր քամիների բացակայության ցորենի աճման ժամանակ, հատիկի վորակի իջեցում չի նկատվել: Գերավաղ ցանքսի հատիկը մինչև անդամ ավելի լավ ե, քան նորմալ ժամանակի ցանքը:

Մեր դիտողությունները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր Դոնի ստորին հոսանքում ցորենի նորմալ ցանքսը կատարվում են մի քանի տարիներում այն ժամանակ, յերբ ողի որական միջին ջերմաստիճանը բարձրանում է մինչև 6°, իսկ մյուս տարիներն այն ժամանակ, յերբ այս ջերմաստիճանը լինում է 10—11°:

Միջին թվով կարելի յե հաշվել, վոր մինչև նորմալ ցանքի սկիզբը ողի որիկան միջին ջերմաստիճանը մի յերկու հնգորդյակի ընթացքում լինում է 7—8°: Սրա հետ միասին հայտնի յե, վոր ցորենի հատիկն արգեն նկատվելի կերպով սկսում է ծերել 3—4°-ի տակ և 7—8° ջերմաստիճանի տակ հարող և ծերել 7—8 որից հետո:

Հետևապես գերավաղ ցանքսի հատիկը կարող է արգեն ծըրել այն ժամանակ, յերբ նորմալ ցանքսի հատիկը դեռևս չի ցանքած:

Այս պատճառով ել 1933 թվի գերավաղ ցանքսերի ծերը 4 որ ավելի առաջ յերեացին, քան կանուխ ցանքսերինը

Շնորհիվ այն բանի, վոր գերավաղ ցանքսի ժամանակ ցողի մեջ խոնավության մեծ պաշար կա, քան ցանքսի նորմալ ժամանակն, ուերմերն ավելի լավ են ապահոված լինում նրանով, և

գերավաղ ցանքսի ծերի ապահովաւթյունն ավելի բարձր ե, քան ցանքսի նորմալ ժամկետին:

Սա առանձնապես կարելոր և յերկրամասի կիսայերաշտային սայօններում, վորտեղ արդեն կանուխ ցանքսերի ժամանակ հողի վերին շերտերն այնքան չորացած են լինում, վոր ծերի յերեալը կառեցնում է:

Վերադարձող սառնամանիքների և ողի ջերմաստիճանի շատ իջնելու ժամանակ, նրանց ազդեցությունը գերավաղ ցանքսերի վրա կարող են տարբեր լինել:

Յեթե ողի ջերմաստիճանի իջնելը տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ հատիկը գեռնա ծիլ չի արձակել, և առանձնապես, յեթե նա չի ծիլ, այն ժամանակ այդ իջնելը չի արտահայտվում գերավաղ ցանքսերի վրա, վորովինետե ողի ջերմաստիճանի շատ խիստ իջեցում այդ ժամանակ չի կարող լինել:

Ավելի շատ մենք այստեղ ընդհարվում ենք ցանքած ցորենի յարովիկացիայի հետ: Ցարովիկացիան, ինչպես արգեն լավ հայտնի յե, բերքատվության բարձրացման մեջ դրական ֆակտոր և հանգիստնում:

Փորձնական հիմնարկությունների հաշվետվությունների մեջ կարելի յե պատահել այնպիսի հաղորդումների, վորտեղ ասվում ե, վոր ցանքսերը նորից վրա համնող ցրտերի պատճառով կադրեցված եյին, սակայն արդեն ցանքած ցորենին հասցրած վնասի մասին վոչինչ չի ասվում: Կարելի յե միայն նշել, վոր այդ ցանքսերի ծիլերը յերբեմն յերեսում են շատ յերկար ժամանակից հետո: Այսպես, 1904 թ. Դոնի փորձնական դաշտում գարնանացան ցորենի ծիլերը յերեացին ցանելուց 36 որ նետո:

Եկվ տեղական յերկրագործության պրակտիկայից ել հայտնի յեն գեպքեր, յերբ ցանքսերը մարտի սկզբին գագարեցվում եյին նորից վերահաս ձմռան պատճառով: Նորից ցանքսը սկսում եյին արդեն միայն մի ամսից հետո: Յորենի ծիլերն այս գեպքում յերեսում եյին նույնպես 36 որից հետո:

Նման գեպքի բերքի հետևանքները շատ տպակարիչ են: Այն ցանքսը, վորը կատարված և առաջին տաք յեղանակի սկզբին, տվեց 50 տոկոս ավելի բարձր բերք, քան այն ցանքսը, վորը կատարված եր յեղանակի յերբորդ անգամ տաքանակուց հետո:

Ուրիշ ներգործություն ունի ցածրացած ջերմաստիճանը, վոր ստացվում և այն ժամանակ, յերբ արդեն հաջանատիկների ծիլերը յերեացել են:

Այս դեպքում ջերմաստիճանի խիստ ցածրացման միջոցին բույսերը խիստ վնասվում են, բայց հետագայում նրանք կազդուրվում են:

Վորովինեան դերավագ ցանքն սկսում են կատարել այն ժամանակ, յերբ արդեն գարունը հաստատվել է, ուստի պետք է համարել, վոր ջերմաստիճանի խիստ շատ ցածրացում չի կարող լինել: Նովոչերկասկ քաղաքի մոտ 40 տարվա ընթացքում ջեմաստիճանը այս ժամանակաշրջանում—9°-ից ավելի ցածր չի իջել:

Բայց ջերմաստիճանի զգալի ցածրացումից ավահոված չեն նաև կանուխ ցանքսերը, այսպես, որինակ՝ 1902 թվին ապրիլի առաջին գեկատի վերջին՝ ողի միջին ջերմաստիճանը բարձրացավ մինչեւ 16°, իսկ ամենաբարձրը այդ ժամանակ հասնում էր մինչեւ 27°: Կատարված ցանքսերը կանուխ ցանված հացանատիկների ներդաշնակ ծիլեր տվին: Բայց ապրիլի յերկորդ դեկատում ջերմաստիճանն իջավ մինչեւ 9°:

1932 թ. ցրտի մի հոսանք անցավ նախկին Հյուսիսային կովկասի (ներկայիս Ազով-Սևվծովյան) վրայով, արդեն ապրիլի վերջին, մինիմումը (ամենացածր ջերմաստիճանը) հասնում էր մինչեւ 8° և շատ բույսեր վնասեց:

Այս ցածրացած ջերմաստիճաններն ավելի հավանական են դերավագ ցանքսերի համար, բայց այս ցանքսերի դրական կողմերն այնուամենայնիվ ավելի արժեքավոր են:

ԱՇԽԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԹԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Աշխանացան ցորենի ցանքսի ժամանակը նրա մշակության ուղղությունը վորոշվում է ողի ջերմաստիճանով և աշխանային ժամանակաշրջանի հարատեսությամբ:

Որեցոր տաքության աստիճանի թույլ կերպով իջնելու ժամանակ, այսինքն՝ յերկարատև տաք աշխանը, բազմամյա որական միջին ջերմաստիճանը 15°-ի, կլինի աշխանացան ցորենի ցանքսի սկզբի ժամանակը:

Որական ջերմաստիճանի ավելի արագ անկման ժամանակ, այսինքն՝ ավելի կարճատե աշխանը, աշխանացան ցորենի ցանքսի սկզբը պետք է լինի այն ժամանակ, յերբ բաղմայա որական միջին ջերմաստիճանը հավասար կլինի 20°-ի:

Այսուեղից եկ աշխանացան հացահատիկների, մասնավորապես աշխանացան ցորենի, լավագույն ոպտիմալ ժամկետերի հարցը

ավելի հասարակ կերպով ելուծվում, քանի գարնանացան ցորենի ցանքսի ժամանակի ժամանակի հարցը:

Փորձնական հիմնարկությունները և տեղական յերկրագործության պրակտիկան նյութեր են հավաքել, վորը թույլ ետքել զանազան ույշների համար ոպտիմալ (լավագույն) ժամկետեր սահմանել:

Աշխանացան ցորենի ցանքսի ոպտիմալ ժամկետերը տեղափորվում են նաև որացուցային ժամանակաշրջաններում:

Յերկրամասի ամենահյուսիսային ույշների համար՝ Վերին-Դոնի, Վյոշենսկի, Լեռնո-Կալիսվինսկի, Միլերովսկի, Տարասովսկի, Ռոլիվսկի, Մորոզովսկի, աշխանացան ցորենի ցանքսի ամենալավ ժամկետը պետք է համարել ոգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 10-ը յեղած ժամանակամիջոցը:

Յերկրամասի արևելյան ույշների համար՝ Յիմյանսկի, Պրոլետարակի, Ռեմոնտինսկի և Կալմիցկի՝ աշխանացան ցորենի ցանքսի ոպտիմալ ժամկետը պետք է ընդունել ոգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 15-ը յեղած ժամանակամիջոցը: Հենց այս ժամկետը ոպտիմալ կլինի նաև նովոչերկասսկի, Շախտինսկի և Կոնստանտինովսկի ույշների համար:

Հյուսիս-արևելյան ույշների համար՝ Մատվեյեվո-Կուրգանսկու, Տագանրոգսկու, Մյամիկյանի, Նուշնպես և Ազովի, Կուշչովկայի, Մեջյուտինսկու և Սալսկու՝ ցանքսի լավագույն ժամկետը կլինի սեպտեմբեր ամսի առաջին կեսը:

Ազովի ծովին մոտիկ ույշներում՝ Յեյսկի, Ստարոմիխնուկու, Պրիմորո—Ախտարսկու, Կոնսեկու—աշխանացան ցորենի լավագույն բերք ստացվում է սեպտեմբերի յերկրորդ կեսից ցանելու գեպքում:

Աշխանացան ցորենի լավագույն ժամանակն արևելյան մերձկութանան ույշների համար, նույնպես և արևելյան ույշների համար, վորոնք ընկած են դեպի Արմավիրի կողմերը, կլինի սոկտեմբերի 1-ից մինչեւ 15—20-ը:

Նկատի առնելով, վոր տեղի բարձրացմամբ ողի ջերմաստիճանը իջնում է ավելի վաղ, այս ույշների նախալեռնային մասերում աշխանացան ցորենի ցանքսը պետք է սկսել 5 որ առաջ:

Ոտրադաշնենսկի ույշնում նույն նկատառումներով աշխանացան ցորենի ցանքսի լավագույն ժամկետը պետք է հոկտեմբերի 1—15-ը համարել:

Աշխանացան ցորենի ցանքսը ույշների համար ցույց տրամադր ժամկետից հետո կատարելը հասցնում է բերքի իջեցման, հարդի և առանձնապես հաճախ հերքի իջեցման:

Քննենք մի քանի որինակներ, վորոնք ցույց են տալիս, թե
ինչպես ե իջնում հատիկի բերքը ցանքսի ուշացումով:

Այսպես, կուբանի փորձնական կայարանում աշնանացան
ցորենի բերքի անկումը կապված ցանքսի ժամկետների հետ,
գնացել ե հետեւյալ կերպ՝

**Աշնանացան ցուենի բերքը ցենտրոնով 1 նեկտարից
(միջինը 5 տարվա ընթացքում)**

| Ցանքսի ժամանակը | Ցանելու նորման | Հարդը ցենտ- ներներով | Հատիկները ցենտներով | Բնակչութեան |
|---------------------|-------------------|-------------------------|------------------------|-------------|
| 15 սեպտեմբերի . . . | 120 կգ | 80 | 15,5 | 692 գր |
| 1 նոյեմբերի . . . | » » | 87 | 19,4 | 706 » |
| 15 » . . . | » » | 82 | 20,7 | 749 » |
| 1 նոյեմբերի . . . | » » | 66 | 19,1 | 737 » |
| 15 » . . . | » » | 54 | 16,5 | 737 » |
| 1 դեկտեմբերի . . . | » » | 44 | 11,7 | 722 » |

Մինչև անգամ կուբանի բավականաչափ խոնավացման պայ-
մաններում, բավական մեղմ ձմեռով և բավական տաք և յեր-
կարատի աշունով, աշնանացան ցորենը ցանքսի ոպտիմալ ժամ-
կետից հետո ցանելու ժամանակ, իջեցնում ե հարդի բերքը:

Սրան համապատասխան կերպով հատիկի բերքն ել իջնում
ե: Ուշ ժամկետին կատարված ցանքսի հատիկի բնակչուն ել
իջնում ե:

Այստեղ ել բերքի իջեցումը լինում ե մինչև վերա-
հաս ձմեռը յեղած աճողական ժամանակաշրջանի կրծատվելով:

Ուշ ժամկետին կատարված ցանքսերը մինչև վերահաս ցըր-
տերը, չեն կարողանում բավականաչափ զարգացնել աճողական
մասսա: Յերբ յերեան են գալիս ծիլերը և շարունակվում ե
աշնանացանի աճը, ցածը ջերմաստիճանի պատճառով թփափո-
րումը և դրա հետ միասին ել ցողունների արմատների ամրա-
ցումն ուշանում ե, հաճախ նա փոխադրվում ե դարսան:

Դրա հետեւանքն այն ե լինում, վոր ուշ ցանքված ցորենի
հասկ արձակելն ուշանում ե և հաճախ տեղի յե ունենում
10—12 որ ուշ քան կանուխ ցանքվածներինը:

Ավելի ուշ հասկ արձակելն արտահայտվում է նաև հասու-
նացման ուշանալու մեջ: Դա տեղի յե ունենում 8—10 որ ավե-
լի ուշ:

**Աշնանացան ցուենի զարգացման ժաղերի ժամանակը
(Կրասնոդար տաղաf, 1924 թ.)**

| Ցանքսի ժամկետը | Ծ կ լ ը | Հասկ ար- արձակելը | Հասունա- ցումը | Հասկ արձա- կելուց մինչ հասունաց- մադահը ժա- մանակը |
|-------------------|-----------|----------------------|-------------------|--|
| 1 ժամկետ 15 սեպտ. | 7 հոկտ. | 21 մայիսի | 23 հունիս | 33 որ |
| 2 » 1 հոկտ. | 12 » | 21 » | 23 » | 33 » |
| 3 » 15 » | 25 » | 21 » | 23 » | 33 » |
| 4 » 1 նոյեմ. | 19 նոյեմ. | 29 » | 27 » | 29 » |
| 5 » 15 » | 2 դեկտ. | 30 » | 29 » | 30 » |
| 6 » 1 դեկտ. | 8 հունվ. | 3 հունիս | 4 հուլիս | 31 » |

Այստեղից յերեսում ե, վոր ուշ ցանքսերի մեջ հատիկի զար-
գացման ու լցվելու մեջ յեղած ժամանակամիջոցը կրծատվում ե:

Ի հարկե, այս կրծատվումն անհետևանք չի անցնում: Բույսը
պետք ե ավելի կարծ ժամանակում հատիկ ստեղծի: Մինչեւ
անգամ յեղանակների բարենպաստ պայմանների, հողի խոնա-
վացման բարենպաստ պայմաններում միևնույն բույսը չի կա-
րող նորմալ վորակի հատիկ առաջացնել:

Հատիկի զարգացման և լցվելու մեջ յեղած ժամանակամի-
ջոցի կրծատվելու պատճառով, այդ զարգացումն աննորմալ է
տեղի ունենում: Հատիկը կամ ավելի մանր ե ստացվում, կամ
թե նա այս կամ այն աստիճանի նվազ ելինում, վորը յերե-
վում ե 29-րդ եջի աղյուսակից:

Յեթե հատիկի լցվելու ժամանակաշրջանում ստեղծվում են
բարենպաստ պայմաններ (չոր քամի կամ ժանդ խոնավացման-
ուայուններում), այն ժամանակ հատիկի ավելի նորմալ հասու-
նացումը տեղի յե ունենում ուշ կատարված ցանքսերինը:

Կանուխ կատարված ցանքսերն ավելի քիչ վարակված լի-
նելով ժանդով, ավելի լավ զարգացած հատիկ ունենալով, ժանդ-
խիստ ներգործության ժամանակ տալիս են թեև հաճախ ցած-
ը զարգած վորակի սերմ, բայց այսուամենայնիվ ավելի լավ, քան
թե ցորենի ուշ կատարված ցանքսերը:

1922 թ. հատիկի բնույթը, որինակ, կախված ցանքսի ժամ-
կետից, փոփոխվել ե այսպես:

| | |
|--|--------|
| Աշնանացան ցորենի ցանքսը հոկտեմբերի 15-ին . . . | 696 գր |
| » » » նոյեմբերի 1-ին . . . | 696 » |
| » » » » 29-ը դեկտեմբերի 1-ին . . . | 696 » |
| » » » դեկտեմբերի 1-ին . . . | 658 » |

Ժանդի սաստիկ զարգացման ժամանակ, փորհ, որինակ, նըշկատվել է 1932 թ. յերկրամասի շատ ռայոններում, ուշ ժամկետին ցանքած ցանքսերի հատիկի նվազությունն ավելի յեր, մինչդեռ կանուխ ցանքսերի հատիկի լիցքը համարյա նորմալ եր կամ աննշան չափով պակաս:

Որինակ, Բերյոզովսկի հատիկային խորհանտեսության մեջ՝ աշնանացան ցորենի

կանուխ ցանքսը տվել է բերք 14 ցենտ. 1 հեկտարից 741 գր ուշ
» » 3 » » 630 գր

Տիխորեցկու հատիկային խորհանտեսության մեջ՝ աշնանացան ցորենի

կանուխ ցանքսը տվել է բերք մինչև 16 ց. հեկտ. 736 գր ուշ
» » 4 » » 648 գր

1933 թ. մի քանի ռայոններում հատիկի նվազության ուժեղ արտահայտությունները նույնպես պետք է բացարձել ուժեղ կերպով զարգացած ժանգով: Այստեղ ել աշնանացան ցորենի կանուխ ցանքսերը տվել են ավելի բարձր բերք, քան թե ուշ կատարած ցանքսերը:

Բացարություններն այստեղ նույնն են, ինչ փոք արված է վերևում: Կանուխ ցանքսերը մինչև ժանգով ուժեղ վարակվելը կարողացել են ձևավորել հատիկը: Ուշ ցանքսերի հատիկի ձևավորումը, հասկի արձակման ուշանալու պատճառով, հանդիպել ե այն մոմենտին, յերբ տերեններն ու ցողունն արգել շատ ուժեղ կերպով վարակված ելին:

Բրիգադիր Պարխոմենկոն Լենինի անվան կոլտնտեսությունից (Նալչիկ) վորոշակի ասում ե. «ուժեղ զարկվածությունը ըստացվեց ուշ ցանքսերի վրա»: Թեպետ և կանուխ ցանքսերը նույնպես ժանգով վարակված ելին, բայց նրանցից կալսեցին մինչև 12—13 ցենտներ հեկտարից: «Ուստի հարկավոր ե ցանել վոչ ուշ սեպտեմբեր ամսից», — ահա նրա յեղակացությունը:

Վորքան կուբանի գաշտերից դեպի հյուսիս և արևելք գնանք, այնքան աշնանացանների ձմեռելու պայմաններն ավելի վատանում են: Այստեղ ավելի ուշ կատարված ցանքսերը ցանքացան և կորսայան մեծ թիսկի յեն յենթարկվում:

Ցածր ջերմաստիճաններն ավելի ուժեղ կերպով են ներկողում ուշ կատարված ցանքսերի վրա, և այդ պատճառով ել նրանց աճը ձմեռն անցկացնելուց հետո կասեցնում ե, իսկ

այդ հասցնում ուշ հասկ արձակելուն, իսկ այստեղից ել ուշ հասունացման:

Յերբ յերաշը վաղ է վրա համնում, նրանք յերբեմն չեն կարողանում մինչև անգամ յերկորդական արմատային սիստեմը զարգացնել: Ցածր ջերմաստիճանների ուշ ցանքսերի վրա արած ուժեղ ազդեցության շորենիվ, նրանք կարող են տալ խիստ լնդմիջահատիկություն, ինչպես այս մասին հաղորդում և Սալտիկովսկին:

Այդ պատճառով ժանդի, չոր քամիների ավելի ուշ յերևալու դեպքում, ուշ կատարված ցանքսերն ազդվում են նրանցից և ավելի ուժեղ կերպով իջեցնում են բերքը, քան նվազ կատարված ցանքսերը:

Ահա աշնանացան ցորենի բերքի իջեցման մի որինակ՝ կիսայերաշտային շրջանում:

Աշնանացան ցորենի բերքը 1 հեկտարից
(Պերսիանովկա)

| Ցանքսի ժամկետերը | Հատիկները | Բնակչություն |
|----------------------------|-----------|--------------|
| 1 ժամկետ 24 ոգոստոսի . . . | 18,1 | 741 գր |
| 2 » 8 սեպտեմբերի . . . | 18,7 | 741 » |
| 3 » 25 » . . . | 17,2 | 728 » |
| 4 » 10 հոկտեմբերի . . . | 10,2 | 688 » |

Արդեն հոկտեմբերի 10-ին կատարված ցանքսը նովոչերկասսկի ռայոնի պայմաններում հատիկի բերքը համարյա յերկու անգամ և իջեցնում, բնակչությունը նույնպես խիստ կերպով իջնում ե: Ժանդի, հողի մեջ խոնավության պակասության, չոր քամիների դեպքում հատիկի բնակչուն ավելի ևս իջնում ե:

Այսպես, 1916 թ. ուշ ցանքսի աշնանացան ցորենի հատիկը 638 գր բնակչություն ուներ:

Թվում ե, փոք դրանից ավելի այն կողմ գնալ չի կարելի, բայց յերկրագործության փորձերը և պրակտիկան ասում են, փոք կարելի յե:

Վերևում մեջ բերված ուշ ցանքսերի հատիկի բերքի իջեցման թվերն ստացվել են աշնանացան ցորենի դաշտերից, փորձ ցանքած ե յեղել սաքուր ցելի մեջ: Զցելված դաշտերում կիսայերաշտային շրջաններում ուշ ժամկետերին կատարված ցանքսերն ավելի ևս ցածր բերք և վատ վորակի հատիկ են տալիս:

Ահա մի շարք թվեր, վորոնք ցույց են տալիս աշխանացան ցորենի ուշ ցանքսերի հատիկի բերքը չցելած հողերի վրա, 1,1; 2,4; 0,6; 3,8; 5,4; 4,7; 4,5; 2,3; 3,7; 7,0; 2,0 ցենտն.

միջինը—3,2 ցենտներ 1 հեկտարից:

Սրանք քաղվածքներ չեն—ծայրահեղ թվեր չեն հաշվետվություններից վերցրած: Սրանք աշխանացան ցորենի բերքի թվերն են, վերցրած մի քանի տարի շարունակ Դոնի փորձնական դաշտի հաշվետվություններից:

Դեպի հարավ-արևելք, Վինոգելնսկի ռայոնում, ձմեռն ավելի բարենպաստ ե աշխանացան ցորենի համար, քան յերկրամասի հյուսիսային ռայոններում, բայց այնուամենայնիվ ուշ ցանքսերի բերքերի հասկ արձակելը և հասունանալն⁴ այս տեղ ևս անցնում ե ուշացումով, իսկ աճողական ժամանակաշրջանը կրծատվում ե:

Գյուղատնտես Խվանովը հաղորդում է, վոր Մեդվեժինսկի ռայոնում 1932 թ.

Կանուխ ցանքսի հասունացումը տեղի յե ունեցել հուլիսի 8-ին
միջին » » » » » 5-ին
ուշ » » » » » 8-ին
գերուշ » » » » » 10-ին

Այս հանգամանքն ազրոտեխնիկայի մի քանի ուրիշ պայմանների հետ կապված, թույլ ե տվել, մեկ կողմից՝ «Կարմիր պարտիզան», «Կարմիր մայիս» կոլտնտեսություններին ցորենի ընդհանուր թերահավաքի գեպքում այստեղ հավաքել 8—9 ցենտներ, իսկ մյուս կողմից՝ «Առաջին հնդամյակ» կոլտնտեսության մեջ հեկտարից 1 ցենտներ:

«Յեվ միայն այնտեղ, վորտեղ ազրոտեխնիկայի պահանջները պահպանված են, այնտեղ, վորտեղ աշխանացան հացաբույսերի կանուխ ցանքսը կարճ ժամանակում ե կատարված, ստացված ե հատիկի բավարար բերք»:

Յորենի բերքը 1931 թվի վոչխաւախորհնեստության մեջ №

| Ժամկետը | Ցանքսի նորմաները | Հատիկի բերքը |
|------------------|---------------------|--------------|
| 1 ժամկետը ցանքսի | 17 Մետ. 60 կգ | 8,87 ցենտն. |
| 2 » » | 1 Հոկտ. | 6,08 » |
| 3 » » | 15 » | 0,7 » |
| 4 » » | » » 90 » | 2,6 » |
| 5 » » | » » 120 » | 3,5 » |

Մինչև անդամ ցանքսի նորմայի ավելացումն ել, ինչպես չերեւում ե աղյուսակից, չի պաշտպանում բերքի անկումից:

Ավելի ես հարավ, «Բալտիյսկի ռաբուխ» հատիկային խորհութեանության մեջ, 1932 թ. դաշտերը ստուգելուց հետո ցորենի մեր արած անալիզը ցույց տվեց, վոր սեպանմբերի 29-ից մինչև հեկտեմբերի 1-ը կատարված աշխանացան ցորենի ցանքսը բերքի իջեցում տվեց 15—20% հատիկի նվազումով: Հոկտեմբերի 26—30-ի ցանքսը բերքի իջեցում ավեց հատիկի 50% նվազումով վերջինիս կաթնամումային շրջանում: 1932 թ. ոպահմալ ժամկետին ցանքած ցանքսը մինչև 17 ցենտներ տվեց, իսկ ուշ ժամկետի բերքը շատ ավելի ցածը եր:

Յեվ այնտեղ, վորտեղ «ցողը բոլորովին կերել եր բերքը» (Դրուժբա ոքչեստվ) կոլտնտեսություն), վորտեղ ցորենը քամուկել եր 70—90% ովկ, վորտեղ հատիկը կազմված ե միայն կձեպից և, ինչպես ասում են, «տակուցք» ստացվեց, վոր թեցորեն, այնտեղ կանուխ ցանքած ցանքսերը տալիս են բարար և լավ բերք:

Փորձնական հիմնարկությունների, կոլտնտեսությունների և խորհութեանությունների բազմաթիվ պրակտիկան բերեւմ են այն յեղբակացության, վոր այնտեղ, վորտեղ նվազ հատիկ և ստացվում, վորտեղ հասկի մեջ հատիկ չեն գտնում, հաճախ բույսը տալիս ե և լիքը հատիկ, և լիքը հասկ: Հետևապես, ամեն ժամանակ չոր քամիները, հողի խոնավության պահպանությունը, ժամանակը չեն միայն, վոր առաջացնում են նվազ հատիկ, աճեցնում են անհատիկ հասկ:

Նրանց նպաստում են նաև հարմար պայմանները: Այդ պայմանները մեծ մասամբ կարելի յե վոչխացնել: Ազրոտեխնիկական միջոցները բավականաչափ ուժ ունեն բույսի և հասկի զարգացման ասբարեհաջող պայմանները թուլացնելու համար: Յեվ այս ազրոտեխնիկական միջոցների մեջ հատիկի նվազության դեմ մղող պայքարում—ցանքսի յուրահատուկ ժամկետերը հանդիսանում են շատ կարևոր միջոց, վորոնք հատիկի բարձր վորակ են տալիս, իսկ այստեղից ել բարձր բերք՝ յուրաքանչյուր հեկտարից:

«Յերկրամասի կոլտնտեսություններում ցանքսի ուշ ժամկետը տեղ չպետք ե ունենան,—ասում եր ընկ. Շերոլգայեվը Յերկրային կուսկոնֆերենցիային: Ուստի այժմ կանուխ և գերափաղ ցանքսերի կազմակերպման հարցերը պետք ե հացահատիկների բերքի և հատիկի վորակի բարձրացման համար մղվող կովում, զրավեն առաջին տեղերից մեկը»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----|
| Առաջաբան | I |
| Արտադրանքի վորակի նշանակությունը դաշտարության մեջ | 3 |
| Հացահատիկների «զարկվածքը» և հատիկի նվազության առաջաց- | |
| ման պատճառները | 5 |
| Ինչպիսի պատճառներ առաջացնում են հատիկի աննորմալ զար- | |
| գացում | 7 |
| Չոր քամիներ | 7 |
| Հողի չորությունը — հատիկի աննորմալ հասունացման | |
| պատճառ | 10 |
| Սնկային հիվանդությունները — հատիկի աննորմալ հասու- | |
| նացման պատճառ | 13 |
| Սղոցող միջատը — հատիկի աննորմալ զարգացման պատճառ . | 15 |
| Միջոցառություններ նվազ հատիկի առաջացման դեմ պայքարելու | |
| համար | 17 |
| Գարնանացան ցորենի ցանքսի ժամանակը | 18 |
| Գերավաղ ցանքս | 28 |
| Աշնանացան ցորենի ցանքսի ժամանակը | 32 |



Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ

Технический редактор О. Тер-Давыдов

Сдано в набор 8/II 1934 г.
Издание с-к 19/3-87
Статформат А5—148x210,
Уполномочен Б-257

Подписано в печать 14/II 1934 г.
Объем 2,5 печ. лист
Заказ № 823
Тираж 1500

Гип. им. „Стачки 1902 г.” АЧКПО Ростов н-Дону.

«Ազգային գրադարան



NL0289632

~~161~~
ԳԻՆԸ 35 ԿՈՊ.
Цена 35 коп.

17.106

6468-

ՃՐԿ

1
2

4 АПР 1934

На армянском языке

Д. И. Носатовский

РАННИЙ ПОСЕВ
И „ЗАХВАТ“ ХЛЕБОВ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՌԱԽԵՎ-ԴՐԱ ՄՈՍԿՎԻՉԱՑՎ ՓՈՂ. Խ 58
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱԽԳՈՑԵՆՑԲ)